Բ.

ՊՈՌՇՅԱՆՑ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԲՆԱԳԱՎԱՌԸ.

Խաղբակյան կամ Պոռշյան իշխանական տոհմի ծագման մասին մեր պատմիչների տված տեղեկությունները շատ չնչին են. նոքա միայն անցողակի կերպով հիշում են, թե խաչենցիք են, առանց մանրամասնություններ տալու նրանց նախահայրերի մասին։ Դրանցից հնագույնը Կիրակոսն է, որ նկարագրելով Գանձակի մոտ յեղած ճակատամարտը Հոնաց և Վրաց զորքերի մեջ 1222թ. Իվանե աթաբեկի առաջնորդությամբ, հայտնում է նաև այս տոհմից պատերազմին մասնակցողների անունները՝ «Գրիգոր որդի Հաղբակայ, եղբայր Վասակայ քաջի և Պապաքն նորուն եղբորորդի»*։ Առաջինը դրանցից գերի յե ընկնում և հետո նահատակվում, իսկ յերկրորդը սպանվում է պատերազմի դաշտում։ «Սոքա գավառաւ խաչենեցիք էին», ավելացնում է Գանձակեցին, «յերևելի ազգէ, հաւատով քրիստոնեայք ուղղափառք և ազգաւ Հայ»։ Վերոհիշյալ Վասակի խաչենեցի լինելու մասին յիշատակություն ունի և Որբելյան**։

Այս տեղեկությունը հաստատում և լրացնում են արձանագրություններն ու հիշատակարանները. Նուխվա գավառի Գեոգբուլաղ գյուղի յերկաթագիր, մեծ ավետարանի յիշատակարանը, գրված 1232 թվին, գաղափար է տալիս այս տոհմի մեջ եղած ավանդության մասին յուր ծագման նկատմամբ. ավետարանը յուր հիշատակարանով գրել է ավել նույն տոհմին պատկանող Վանենի իշխանուհին՝ «դուստր բարեպաշտ իշխանին Ջաջուոյ որդոյ Խաղբակայ թոռն Բակ իշխանին» և նվիրել Հավատուկ կոչված իրանց տոհմական գերեզմանատանը***։ Հիշատակարանից երևում է, որ Բակ իշխանը վոչ թե Խաղբակի հայրն է, այլ տոհմի նախահայրը, «թոռն Բակ իշխանին» խոսքերն էլ այդ իմաստով պետք է հասկանալ, վոր Վարդանանց պատերազմից հետո ամրացած մի բերդում, պարսպից հանդիմանեց ուրացող Վասակին, ցույց տալով Պարսից ներկայությամբ նրա կատարած չարիքը Հայոց աշխարհի գլխին, ապա յոթ հարյուր հոգով գիշերանց դուրս յեկավ բերդից և ազատվեցավ։ Բակ իշխանն այդտեղից իրեն ձգեց «յամուրսն Արցախայ և կեցեալք (նախնիք Խաղբակեանց) բարեպաշտությամբ և քրիստոսական հաւատով մինչև յայս բարեպաշտ իշխանս Ջաջուռ և ի սմին որդիացեալս քսասէր Վանենի»*։ Ընթերցողն ինքը տեսնել կարող է, վոր Բակ իշխանի այս ամբողջ պատմությունը հիմնված է Ցեղիշեի վրա**, միայն նրա փախուստը «յերեսաց Շապհոյ արքային Պարսից» է համարում յիշատակարանի գրողը, վոր պարզ սխալ է, և գուցե յիշողությամբ ոգտվելու հետևանք։ Խաղբակյանների ծագման ավանդության կապը Բակ իշխանի հետ կարող եր կազմվել Բակ և Հաղբակ անունների նույնությունից. տոհմը կոչվում է և Վարդանանք***, թերևս Բակի Վարդանանց իշխաններից մեկը լինելու պատճառով. իսկ յեթե Վարդանանք կոչումը հին է և իրական, նշանակում է հետագայում վորպես լուսաբանություն տոհմի այդպիսի անվանակոչության, կապվել է Բակի պատմության հետ։ Իսկապես, ուրեմն, տոհմի մասին պատմական տեղեկությունն սկսվում է հիշատակարանի մեջ Խաղբակի անունով, վոր Ջաջուռի հայրն եր, Վանենու պապը։ Բայց Խաղբակյան կոչումն ավելի հին է, քան Ջաջուռի հայը Խաղբակը և այս մասին ունենք ցուցմունքներ։ Որբելյան վավերագրերից առնելով պատմում է. «Իշխան մի Դլեն անուն որդի Խաղբակայ, տայ յիւր հայրենի ժառանգութեանցն զԽոտ գիւղն և զԽոտագետոյ մեծ այգին և ի Վժանիս զԾաղիկ, որ է տեղի բազում անդաստանաց, վասն իւր հոգւոյն ի տէր Յովհաննէս և ի սուրբ Նշանն . . . ի թվիս 495 (=1046)»։ Տաթևի Գրիգոր յեպիսկոպոսը, վոր վերոյիշյալ Յովհաննես յեպիսկոպոսի հաջորդն եր, նույն Դլեն իշխանից գնում է «զԲոլորաքարն Նորեաց բաժինն» և հաստատում Տաթևի անունով[1]։ Խաղբակի վորդի Դլենը թեև կալվածներ ունի Սյունյաց աշխարհում կամ Բաղաց թագավորության մեջ, բայց նորա և ժառանգների բնակավայրը Արցախումն է, Ջալալ Դաւլայի իշխանության մեջ։ Ստեփանոս Որբելյան այդ ցեղի յետագա սերունդ յերեք յեղբայրներից՝ վորոնցից ավագը Հասան եր կոչվում, գնել է 1294 թ. նրանց հայրենական Աստվածընկալ սուրբ Նշանը[2]։ Այսպիսով տեսնում ենք, վոր յերկու տոհմերի ծագումն էլ Խաղբակ անունը կրող իշխաններից է և բնակավայրն էլ Խաչենում, Ջալալ—Դաւլայի իշխանության մեջ, ուստի և պարզ է նրանց ցեղակցությունը։ Յեթե իրական

* Պատմ. Հայոց. Թիֆլիզ. 1910 թ. եր. 194։

** Ղուկասյան Հրատ. Թիֆլիզ. 350։

*** Ավետարանի մասին առաջին տեղեկությունը տալիս է Ջալալյանը Բ. 216, վոր տեսել է, վորպես թե Վարդաշեն գյուղում, մինչդեռ Բարխուդարյան Աղվանից Յերկիր և դրացիք, Թիֆլիզ 1893 թվին. յեր. 342 ցույց է տալիս իսկական տեղը Նուխվա գավառի Գեոգ—բուլաղ գյուղը. ինքներս էլ 1910 թվի ձմրանը հատուկ գնացել ենք այդ գյուղը, ուսումնասիրելու ավետարանը մանրանկարչական տեսակետով և արտագրել բոլոր հիշատակարանները։ Ձեռագրի և գլխավոր յիշատակարանի մասին տես І. А Орбели ի'Асан Джалал князь Хаченский СП. 1909. եր. 410. արտատպ. Известия Имп. Академии Наук. 1909. Որբելին սխալվում է հիշատակարանի թվականը 1222 ուղղելով՝ հիմնված Իվանե աթաբեգի մահվան տարեթվի (1229թ.) վերա։

* Յավելված Բ. 3.

** Տփխիս. 1904 թ. եր. 178. 182.

*** Ալիշան Սիսական. 487.

1 Թիֆլիզ 1911թ. 315. 322.

2 Որբ. Ղուկ. հրատ. 291, 315, 322, 485։